69. ԱԽՉԻԿ ԵՎ ԲԱՍԲԱԿ

Կէլնի կէլնի, մեյ թամբալ ախչիկ կէլնի: Էսա ախչիկ ուր պան-գյործ կթողնի կթռնի տանիս, ուր քեֆին իսոր-ինոր խետ կխաղա չյում իրիկուն:

Մեկ օր էլ էսա ախչկան ուզողներ կուկյան ինոնց դուռ: Մերը տանսիկ կբոռուս ախչկան.

- Կդդամանի՛կ, կտրակզի՛կ,
Էրկու ճող ծամ կընգիյն.
Էրկու զողալ ասդղ վեր պոկին,
Տանսիկ տակ արե՛:

Ախչկա ուզողներ որ մոր խաբրներ կլսեն, կխավատան ինոր. շատ կխավնեն ախչկան, կասեն. էսա ի որ էսա, թակը չկա, տանեյնք մե խարս:

Մեկ-էրկու շաբաթ օր կնցնի, կասեն. քյա խա՛րս, չախրակ մանի: Կաչկեն կտեսնան որ ոչ պան մը կանի, ոչ էլ չախրակ կմանի: Կեսրանյք իսոր վերեն շատ կնեղանան, կէլնեն կիտրըմ պամպակ կկշռեն, կդնեն խետ խարսի կշտին, կասեն. - Չյում իրիկուն էլնի, թել կախվի պատիս. թե չէ վայ իկե, քեյ տարե:

Դուռը կփակեն վեր ինոր. կէրթան ուրենց պանին:

Խարս կտիսնա որ չարա չէլնե, չի կանա էսա բիթյուն պամպակ մանի, անի թել: Փեստմ' կառնի ձեռ, կզանի էն պատիս էն պատ, տան մեջ կան կուկյա:

Կաս կութրաթ, փեստը կառնի սապանի տղի խոսին կծայվի: Սատանեյք հըմեն կթափեն ինոր վերեն, կասեն. - Ի՞նչ կուզես ուզի, ուզածդ տանյք:

Էն էլ ուր ուզածը կուզի: Կասի. Ես էն կուզեմ որ կիտր ըմ պամպակը էլնի թել, կախվի պատեն:

Մատանեյք հըմեն կթափվեն էդա պսմպկի վերեն, շոտմ կգզեն, կմանեն թել կկախեն պատիյ:

Տնըցիյք իրիկուն որ կուկյան, դուռը կպանան վեր խարսին, կտիսնան որ թելը պատիյ կախ ի, շա՛տ կուրախանան, կիտեն որ խարսն ի մանե:

Մեկ էլ որ թորվան ակնեն մեյ խատ պապուկ տյուս կէլնի, խարսը կխասնի կպոնի, կպայքի ինոր: Տնըցիյք կխառոյուցեն. - Էտա պապուկ քե ի՞նչ ի:

Ա՜խմ՚ կքյաշի խարս, կասի. - էն իմ մորքյուրն ի, օր մեյ կիտր թել կմսներ, ինչանյք, ինչանյք, չյում էլավ պապուկ, մտավ թորվան ակ:

Կեսրանյք՝ էսա խաբրներ որ կլսեն, կվախենան, էլ չեն թողնե որ ուրենց խարս թել մանի. չէլնի որ էն էլ չախրակ մանելուց դառնա պապուկ, մտնի ակ, դառնա փսուս:

Խելքով խարս էսասնա անելով, ազատվավ թել մանելուց: